

ԲՈՒՉԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՍՈՒԹԻՒՆԸ

ՎԵՑԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋ, ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ

ՄԱՑՈՒԿԾԸ ԲԱՆԻՑ Ի ԾԱՅՐԷ

ԳՆՈՒՄ Ա.

1 Յաղագս ընդ երկուս բաժանելոյն աշխարհին Յայոց, եւ թագաւորելոյն Արշակայ հրամանաւ թագաւորին Յունաց, եւ կէս ազգին թագաւորեալ խոսրով հրամանաւ թագաւորին Պարսից, թէ ո՛րպէս զաշխարհն ընդ երկուս բաժանեալ՝ սահման ի մէջ իւրեանց արկանէին, եւ ո՛րպէս աշխարհն հատան յիւրաքանչիւր յերկոցունց կուսաց:

2 Ապա յետ մահուն Մանուէլի զաւրավարին Յայոց ոչ իմն կարաց հաստատել ի վերայ աշխարհի թագաւորութեանն¹ Արշակայ. այլ բազումք ի Յայոց նախարարացն անտի ելին զատեան զնացին առ թագաւորն Պարսից, եւ մատնեցին նմա զաշխարհն Յայոց. եւ ինդրեցին ի նմանէ թագաւոր Արշակունի: 3 Եւ Նորա յանձին կալեալ մեծաւ ինդութեամբ ընդ իւր ձեռն տալ իւրով բանիւ ի նմին տոհմէ ի թագաւորութենէն Յայոց Արշակունի, եւ նովաւ յինքն գրաւել զաշխարհն Յայոց: 4 Ապա գտաներ ի նմին տոհմէ մանուկ մի անուն խոսրով, եւ կապեաց թագ ի զլուխ Նորա. եւ ետ նմա կին գթոյր իւր զՉրուանդուխտ, եւ արար ընդ նմա զամենայն զգաւրս զաւրութեան իւրոյ. եւ Չիկ Նուիրակ դաստիարակ ետ արքային խոսրովայ. եւ եկին հասին յաշխարհն Յայոց: 5 Իբրեւ ետես Արշակ արքայ զնոսա, մերժեցաւ տեղի ետ չոգաւ զնաց ի սահմանս Յունաց, եւ երն թիկունք Արշակայ թագաւորին Յայոց. եւ խոսրովու՝ թագաւորն Պարսից:

6 Ապա եկին զաւրքն Յունաց թագաւորին ի թիկունս, եւ թագաւորն Արշակ զԵկեղեցաց զաւառաւ, եւ զաւրքն Պարսից եւ արքայն խոսրով յԱյրայրատ գաւառին: 7 Ապա դեսպանք եւ հրեշտակք երկուց թագաւորացն, Յունացն եւ Պարսից, միմեանք² առ միմեանս երթելեկէին: 8 Եւ այնուհետեւ առնէ խորհուրդ միաբանութեան հաւանութեան ընդ միմեանս թագաւորն Յունաց եւ թագաւորն Պարսից. եւ լաւ համարեցան զաշխարհն Յայոց նախ ընդ երկուս ի մէջ իւրեանց բաժանել. զի ասէին՝ թէ ի միջի մերում բնակեալ է այս հզար եւ հարուստ թագաւորութիւն, լաւ է զի այսու եղծանել եւ խանկարել

1 *Յօրինակի միում* թագաւորութիւնն

2 *Յօրինակի միում* միմէնց